

ներ բարոյապէս յաղթող ելնեն և ընդունակ գառնան աստուածային արդարութեան նոր շնորհներ բնգունելու և զարգացնելու իրենց և իրենց շրջապատողներին մէջ: Այլապէս պատմութիւնը մի անխորհուրդ և աննպատակ խաղ կլինէր և փրկագործութեան գաղափարը ո՛չ մի բովանդակութիւն չէր ունենայ: *



ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵՈՒ

ԹԷԳԴԱՐԱՅ ՊԵՐԿԵՐ.

(Շարունակութիւն) **

Իւր հեռանալուց յետոյ Պարկեր առ ժամանակ անցկացրեց Ս. Կուրա կղզում: Թէպէտ հիւանդ, թէպէտ կազդուրուելու նպատակով եկած, սակայն չկարողացաւ անգործ թափառել այդ բնութեամբ հրաշալի վայրերում: Այլ իրը կողմնացոյց, որ ինչ էլ անես դէպ հիւսիս է դառնում հողով դարձած գէպի իւր պարտականութիւնը, շտապեց այցելել նեղբունների մի փոքրիկ գաղթականութիւն: Ո՛րքան մեծ էր միեմարութիւնը, երբ տեսաւ նրանց բարեկեցիկ վիճակում: Երկրորդ գործն եղաւ մի երկար նամակ գրել իւր սիրեցեալ հօտին: Որի մէջ պատմում էր իւր հովուական պաշտօնավարութիւնը, ցոյց տալով այն ճանապարհը, որ հենց սկզբից նախագծել էր, և յորդոր էր կարգում այժմ էլ նոյնով ընթանալ անշեղ: Առողջութիւնը ակնյայտի կերպով արագ ուղղուում էր, այս բանի վրայ վստահացած Պարկեր երկրորդ անգամ ոտք դրեց Եւրոպայ թիշկների խորհրդով:

1855 թուին Չուլցիբիոյ իւրի ստորոտում նա միացաւ մի խումբ կրթուած ճանապարհորդների որոնք այնտեղ հանդստավայր էին ընտրել իրենց համար: Ուր և մնաց վեց շաբաթ:

* Է. Հարցի պատասխանը յատուկ թիւից իրեն առաջնորդող իսկ Է. հարցին հետեւեալ համարի առաջնորդով կպատասխանեն:

** Տես. Արարաց, յոյլիս, հշ 271

Այստեղ գրելէ նա իւր մի կծու ծաղրը՝ Մլախի կարծիքը տիեզերքի կազմութեան մասին: Որ լոյս տեսաւ հեղինակի պատկերով մի ժողովածուի մէջ, որ մտածել էին հրատարակել յիշեալ ճանապարհորդները: Այս գրութեամբ իրեն յատուկ կծու լիզուով ծաղրում է նա մարդկային անձնապատան կարծիքը, որ իրեն համարելով տէր տիեզերքի, ըստ իւր տկար սակայն հպարտ մտաց վճիռներ է տալիս խելքից ու մտքից շատ բարձր: Հեռի ու անխմանալի երևոյթների մասին: Պարկերի զօրութիւնը գնալով արծարծուում էր, նա իրեն աւելի ու աւելի առողջ էր զգում: մինչև անգամ մի օր մի մեծ հացենի կտրեց, առանց յողնութիւն զգալու:

Այս բանով քաջախերուած գնաց Հոմ վատիկանի մատենադարանում աշխատելու զխառնորութեամբ, բայց խտրութիւն յոյս էր: օրերով նա ստիպուած էր տանը նստել. տկարութիւնը օր աւուր սաստկանում էր: Վերջին հարուածը տուեց նորա առողջութեան Ամբրիկայից եկած այն լուրը, թէ իւր բարեկամ Ծոն Բրոունը անյաջող փորձ է ունեցել ապստամբեցնելու սարուկներին, որի համար կալանաւորուել և մահուան պատմի է ենթարկուել: Դառնապէս լացաւ Պարկեր իւր բարեկամի վաղահաս մահը, սակայն միեմարում էր ինքն իրեն այն յուսով, որ այդ մահը ի զուր չի անցնի աղատութեան դործի համար: «Ես հաւատացած եմ գրում է նա իւր բարեկամ Ծոնին, որ Բրոունը կմեռնի ինչպէս մարտիրոս: Բայց մարդկութիւնը չի կորչի: Աղատութեան մեծ քարտէզը միշտ արեւմբ է գրած: մենք էլ պիտի անցնենք Կարմիր ծովը, ուր պիտի խնդգուին դեռ շատ Փարսաններ: Կարծէք մարգարեական լինէին Պարկերի խօսքերը, ուղիղ չորս տարի յետոյ անդի ունեցաւ այն մեծ պատերազմը, որ վերջ դրեց ստրկութեան:

Պապական ստիկանութեան հետ ունեցած ընդհարումը ստիպեց նրան հեռանալ Հոմից Փլորենցիա: ուր և 1860 ին մայիսի 10-ին խաղաղութեամբ կնքեց իւր մահականացուն քրիստոնեայ և ինչպէս իմաստասէր, որին մահը ո՛չ երկիւղ և ո՛չ էլ անհանգստութիւն կարող է պատճառել: Սխալն

ցաւում էր որ չկարողացաւ անել՝ ինչ որ ծրագրել էր: «Տեսնում էք, դարձաւ նա մահուան բուլին իւր շրջապատորներին: Ես մահուանից չեմ վախենում: Բայց կը ցանկայի մի քիչ էլ սպրել, վերջացնել սկսած գործերս: Աստուած ինձ շնորհել էր մեծամեծ ձիրքեր, միայն կէսը ես գործադրեցի: Բոստոնում մահուան լուրը խորը ազդեց նորա սիրեցեալ հօտի վերայ, երկար ժամանակ չէին ուզում Պարկերի տեղ մի ուրիշին հրաւիրել: Կիւրակի օրերը հատաքում էին Պարկերի բնակարանը և յիշում ու նորոգում էին իրենց սրահներում այն յաւիտենական խնդիրները, որ երբեմն իրենց մեծ ուսուցիչը պարզում էր ամբիւնից:

Անցնենք Պարկերի գրական գործունէութեան և քարոզներին:

Մի հեղինակի հասարակական նշանակութիւնը բնութագրու համար բաւական չէ նրա տաղանդը, խելքը և ոճը: Գնահատել հարկաւոր է ամէնից առաջ ցոյց տալ նրա տեսութեան շրջանը: մտաւոր հորիզոնի սահմանը: Որքան լայն է հորիզոնը և ընդարձակ շրջանը, այնքան էլ խոր ու հզօր է հեղինակի ազդեցութիւնը հասարակութեան վրայ:

Արդ՝ եթէ այս չափով որոշելու լինինք Պարկերի գրական գործունէութիւնը, դուրս կգայ որ նոյն իսկ Ամերիկայում շատ քչերը այնքան կատարեալ կերպով յուզած ու պարզած կլինին բարոյական և հասարակական խնդիրներ: Պարկերի գործունէութեան իրր հիմք՝ լինի գրաւոր երկ կամ քարոզ, ծառայել են երկու սկզբունք. հաւատ գեպի մարդկային բարի բնաւորութիւնը և հաւատ գեպի գրաւանասահման կատարելագործութիւնը քրիստոնէական ազդեցութեան շնորհիւ: Պարկերի համար խորին համոզմունք էր, որ եթէ քրիստոնէական սէրը, կարեկցութիւնը, բարոյական կատարելութիւնը գործադրենք հասարակական կեանքում, կհասնի բազմաւորութեան և ազատութեան յաւիտենական գարունը: Եւ այս կողմից նորա սէրը գերազանց է: Ահա ի՞նչ է բացառանշում «յաւիտենական կենաց» քարոզի մէջ: «Որքան աւելի եմ ապրում, այնքան առաւել սիրում եմ այս հրաշալի աշխարհը և աւելի ու աւելի զգում

եմ ամէն մեծ կամ վոքը առարկայի մէջ նորա Արարչին»: Պարկեր շատ լաւ ծանաչում է մարդկային կեանքը և նորա մրուրը, սակայն ոչ միայն չի տեսնում մարդկանց, այլ առաւել հաւատում է բնածին բարի հակումներին: «Ամէն տեղ, ամէնից համեատ և աննշան անձի մէջ յաճախ տեսել եմ զրօքներ, որ լրացրել են մարդկային իդէալական պատկերը»: զրուս է նա իւր հօտին ի քաջալերութիւն: Կեանքը Պարկերի համար հրաշից մի շղթայ է: «Յամարի և ծովի բուսականութիւնը, ասում է նա, լի է գեղեցկութեամբ և գաղանձներով, որ քննում ե պարզում է մեզ գիտութիւնը: Տիեզերքը աւելի բազմակերպ, անըմբռնելի և հրապուրիչ է վերահայեցող հոգու համար, քան մարդկային կեանքի աշխարհը իւր նորակերպ բուսականութեամբ և կենդանիներով աւելի դիւրիչ է, և այն օրէնքները, որով կառավարուում է նա աւելի դարմանալի են: Քան արտաքին աշխարհը փոփոխող մատեմատիկական օրէնքները: Եթէ աշխարհը ինձ աննշան է թւում համեմատելով անմահ, յաւերժ կատարելագործող հոգու հետ: Այդ աշխարհի ուսումնասիրութիւնը իմ հրճուանքն ու ոգեւորութիւնն է կազմում: Անշուշտ երբ և իցէ կծնի մի հանձար, որ Բեկոնի նման ցոյց կտայ մեզ մի նոր գործարան, որոշելու նորա սկզբունքները՝ դուրս կբերէ նորա ընդհանուր պատկերը և երկնային կազմութիւնը»:

Նորա գրական գործունէութիւնը խիստ բազմապիսի է: Սովորականից դուրս լայն և ծննդական միտք և յանպատրաստից խօսելու զարմանալի մի ունակութիւն՝ նորա երկու աչքի զարնող յատկութիւններն են: Նորա բոլոր գրուածքը 14 հատորներ է կազմում, որ կարելի է բաժանել հետեւեալ մասերի: Երեք հատոր աստուածաբանական խնդիրների ներած, մէկը քաղաքագիտութեան, մէկը բնկերարանութեան, մէկը Ամերիկայի պատմութեան, երկուսը ընդդէմ սարկութեան: Իսկ գործնից դուրս գնանդան և բազմաթիւ խնդիրներ՝ քարոզներ, ծառեր, յօդուածներ, քննադատութիւնք կազմում են վերջին հատորների բովանդակութիւնը: Առաջին հինգ կարգի գրուածքները մի կողմը գնելով բաւականանալք

նորա քարոզներով, ուր երևում է Պարկերի բազմակողմանի ինքնուրոյն աշխարհահայեցողութիւնը, սուր ըմբռնողութիւնը և դրական տաղանդի առանձնայատկութիւնը:

Քարոզների ընդհանուր կողմն է զգացմանց ղեղման հաղուադիւտ զուգութիւն կծու երգիծարանութեան հետ մտքի համարձակ թռիչք՝ ամերիկացուն յատուկ գործնական խելքի հետ Գալոփ քարոզների նիւթերին նրանք կապուած են քաղաքական և ընտանեկան հարցերի հետ: Նորա նշանաւոր քարոզներից մինը զօր ուղղուած է պատերազմի դէմ, որ այդ ժամանակ բռնկել էր Ամերիկայի և Մեկսիկայի մէջ: Պարկեր պատերազմը քրիստոնէութեան տեսակէտով անբնական երեւոյթ է համարում: Թէև հնում դարնական և անհրաժեշտ բան էր: Ամէն մի յարձակմունք քրիստոնէութեան մերժումն է: Եւրոպական աստուածային սիրոյ անպատուութիւն. մի կողմը թողած նիւթական մեծամեծ ֆեոդալներն և աւերմունքը: պատերազմը տառնակ հաղար մարդկանց կեանք է ոչնչացնում: Քիսկ մարդկային կեանքը մի սուրբ բան է: Անցէք Բոստոնի խուլ փողոցներով հարցրէք ցնցոտիքով ծածկուած մի ողորմելու կեանքը որ նա էլ իւր սիրելին ունի կամ ինքը մի ուրիշի համար աշխարհիս երեսին ամէնից թանկագին էակն է: մինի եղբայրն է: կամ ամուսինը: կամ որդին: Նախ քան նորա լոյս աշխարհ գալը մի սիրտ նորանով տրոփել է: մայրը նորան քնքշութեամբ սեղմել է իւր կրծքին: աղօթել: լաց է եղել նորա համար: Այս աշխարհի հզօրների համար դուցէ նորա կեանքը ոչինչ չարժէ: որովհետև խեղճը չունի ոչ շքանշաններ: ոչ ծառաներ և ոչ զինանիշ: բայց չմոռանա՛ք, որ նա էլ իւր ծագումը այն առաջին մարդուց է հաշուում որից են և աշխարհի բանաւորները: Աստուած է ստեղծել նրան և իւր Որդու արեամբ որդեգրել: Նորա արիւնը թափելուց էլ ի՛նչ մեծ մեղք կարող է լինել: Դուք ուղարկում էք 50,000 մարդ, թշնամին էլ հաւանօրէն նոյն չափ կհանէ: 100,000 մարդ դանադան ազգութիւններից պիտի կռուին: Այն ինչ նրանք իրար անդամ չեն ձանաչում: ուր մնաց մահու չափ իրար ատեն: Նրկիրը բա-

ւական է նոցա համար: ոչ որ միւսի արեի առաջ չի կտրել: սակայն իւրաքանչիւրը կաշուց դուրս է գալիս անոյեանին սպանելու: Սուր հրացան, թնդանօթ, նիզակ անդուլ գործում են՝ ընկնողի ուղեղը ձիու սրմբակի տակ է ցրում: Ենա դարձողներից մեծ մասը խեղանդամ է տուն գալիս: մինի ոտքը չկայ: միւսի ձեռքը երրորդը աչքի լուսից զրկուած է: Արդարախոհ լինելու համար յիշենք և պատերազմի լաւ կողմերը:

Բազմաթիւ մարդիկ կան, որ պատերազմից մեծապէս օգուտում են: Պաշար մատակարարողներ, շոգենաւերի տէրեր և այլ առեւտրականներ միշտ կամենում են պատերազմի կռիւ: Թող երկրներ քանդուին: նրանց ի՛նչ գործ: չէ՞ որ իրենք կհարստանան: Մի ուրիշ դասախորդ էլ կայ, որին՝ պատերազմը հարստութիւն: պատիւ է բերում: նոյն իսկ հերոս ու հիւսիսն առարկայ դարձնում: Վիրլինգտոն իւր պատերազմական յաջողութեանց համար 5,400,000 դոլլար պարգև ստացաւ և 40,000 դոլլար էլ կենսաթոշակ: — Անցնելով պատերազմի անբարոյական աղղիցութեանը, նա երկարօրէն կանգ է առնում այն սպանիչ աղղիցութեան վրայ, որ պատերազմը հասցնում է հասարակական բարոյականութեանը: «Ուր պատերազմը՝ այնտեղ և դադարում է օրէնք. ոյժը և խորամանկութիւնը մարդկանց միակ առաջնորդն են...» Պատերազմի մէջ պետութիւնը վարժեցնում է մարդկանց խաբել: գողանալ: ըսպանել: Նրեկուայ աւաղակը այսօր պատուաւոր զինուոր դառած շքանշանների կարող է ստանալ իւր չարագործութեան համար: Զինուորական դպրոցը սովորաբար զրկում է մարդուն խաղաղ աշխատանքի ընդունակութիւնից: Ծառ յետ դարձած զինուորների հասարակութեան զլխին ցաւ են դառել իսկ ծնողաց համար խաղաղութիւն...» Սեփական օճախ կին, երեխայ, մի խօսքով մարդու սրտին մօտ թանկագին բաների համար միայն զէնք բարձրացնելը մարդու անբնարարիկ իրաւունքն է: Ես ատելով ստում եմ պատերազմը: սակայն չեմ կարող չյարգել այն մարդկանց, որոնք ազատութիւն և հաւասարութիւն պաշտպանելու համար զէնք են

բարձրացրել: Իրաւ որ արժէ մարդկային այդ սրբազան իրաւանց համար արիւն լծափել:

Տեսնենք այժմ նորա հայեացքը հոգու անմահութեան մասին:

Յաւիտենական հարցերից մէկն է հոգու անմահութիւնը: Չի եղել մի խմաստասեր որ ուղղակի կամ կողմնակի կերպով չօշափէր այդ խնդիրը: Կանաւ Գէօտէ և այլք այդ հարցը բարձրացրել են: Պարկեր նոյնպէս շօշափել է այդ խնդիրը իւր մի քարտզի մէջ: Բայց իրեն յատուկ նորաձև մտածման և ապացուցի եղանակով: Նա առաջ ու առաջ մէկ մէկ հաշուում է հոգու անմահութեամբ զբաղուածներին կարծիքը և ապացոյցները: ապա հարցը փոխում է ամէնին մատչելի հողի՝ մարդկային սրտի վերայ: «Ժամանակ է լինում: Երբ մենք երբեք չենք մտածում հոգու անմահութեան մասին: Կեանքի երջանիկ բոլորներում բաւական է մեզ բարեբաղդութեան գիտակցութիւնը: Բայց զայն է օր: Երբ մեր երջանկութիւնը չի զոհացնում: անտանելի դժուր պատում են մեզ: Երբ յանկարծ մահը խլում է մեզանից մեր հօրը կամ մօրը: Երբ կամ որդուն կամ կնոջը կեանքը իւր հրապորդը կորցնում է: Ամէնից սառնարիւն: ամէնից տարակուսող անձն անգամ անտարբեր չի մնայ: Կեանքը բոլորովին կերպարանափոխ է լինում: Ահա անտարբեր անգամ ձեռները դէպ երկինք բարձրացրեց և անմահութիւն խնդրեց: Երբ ևս աօն օր փողոցում հագնուած զարդարուած ամբօխ եմ տեսնում: յաւիտենական կեանքի վրայ չեմ մտածում: Բայց երբ աչքիս առաջ բերում յիշեցնում են փետացած դիակը: սառն ու անողորմ փողը: Ըզգում եմ որ ամէն բան չվերջացաւ: որ մարդուն սպասում է մի ուրիշ կեանք: Գերեզմանը լեցնող հողը: նորա վրայի ծածկոյթ կոշտ հողը իմ կորստը չէ: նայելով նրան: ևս աւելի կենդանի զգում եմ անմահութիւնը: Գերեզմանի միջով ես երկինքն եմ տեսնում: Ստիպեց լինում են աւելի ծանր բոլորներ: մահուանից դառն: որ թիւնաւորում է հողին: բոլոր: երբ կեանքը մի շնչին երևոյթ է և բարի գործերը ունայն հնչին: Բայց մարդկային սրտում ահա բոբբոբուեց անմահ հուրը: հողին մըրցում է երկրային պատենի դէմ և ձգտում

է դէպի վեր: Եւ յաւիտենական կեանքի յոյսը: Ճշմարտութեան ապագայ յաղթութեան վերայ ունեցած հաւատը և յառաջագիմում: Թեան անսահման շափող լուսաւորում է անմիտութար սիրտը: Այդպիսի բոլորներում երկնային լոյսը թափանցում է փորձութեան խաւարը: մեղք և վիշտ: խի ծիրանաներկ ամպերը արեւելքից զուշակում են երկնային արշալուսի մօտենալը: մեր երեսը փայլում է նորա ցոլքով և մեր տրամուծութիւնը անհետ կորչում է: Այն միտքը որ թոյլէրն ու ստրուկները իրենց իրաւունքը կվերականգնեն: մեղ նոր եռանդ է ազդում և դրդում այստեղ պաշտպանել նոցա իրաւունքը: Մեծապէս միտթաւում է մեր հողին: Երբ բնակում է մեր մէջ անմահութեան հաստատուն յոյսը և այստեղ խի հաղորդակից ենք յաւիտենական կեանքին: Եւ որ մեծն է: ամէն մարդ կարող է հասնել այդ միտթաւութեան: Երկնային կենաց ուրախութիւնը սկսում է հենց նոյն բոլորից: երբ մենք կատարում ենք այն պարտքը որ մեզ նորան է մօտեցնում: Արդարութիւն: Լմաստութիւն: հաւատ և սէր: ահա ի՞նչ են սպասում մեզ երկինքում: այստեղ այդ բաներին հասնելը մեր կեանքի բարձրագոյն բարիքն է:

Մենք արդէն տեսնեալ թէ ինչպէս հոգւով սրտով նա դարձած էր դէպի ահարն ու խեղճ: Ծննդան ու ստրուկը: Ոչ միայն նիւթական օգնութեամբ նրանց քաջակերում էր: այլ խօսքով ու յորդորով միշտ ձգտում էր բարձրացնել նրանց մարդկային արժանիքները: քաջակերում նրանց համեստ գործունեութիւնը: հաւատալով որ ծակտի քրտինքով աշխատողը Աստուծոյ պատուէրն է կատարում: Նորա նշանաւոր յոգուածներէից մէկը հենց այդ բանի վերայ է: «Ինչպիսիան աշխատանքի նշանակութիւնը: զա մկանային աշխատանքի նուիրագործումն է: Այստեղ նա յիշատակում է նախ աշխատանաց դէմ եղած նախապաշարումը: որ հարուստներին համար հաւատար է խայտառակութեան: Պարկեր այդ բանում տեսնում է բոբբոբուս դարբերի արձագանքը: երբ աչքերը անց էին կոցնում իրենց կեանքը մեղկութեամբ և անգործութեամբ: խի աշխատանքը ստրկի բա-

մինն էր: Այդ հայեացքը՝ ըստ Պարկերի հա-
կառակ է քրիստոնէութեան ոգուն, որ մարդ-
կային արժանիքը ցոյց տուած արդիւնքով և
իր մերձաւորին մատուցած ծառայութեամբ
է չափում: Ամենից ազնիւ ամենամեծ հոգին
որ երբ և իցէ եղիւ է երկրիս վերայ՝ ծագած
է ոչ թէ կոշտ ու անդործ գասկցի այլ աշ-
խատանքի ու աղքատութեան շրջանից: Բե-
րած կտորները արդէն բաւական են ցոյց տա-
լու համար թէ որչափ բաղձնադրմանի էին նրա
ուղեղն ու սիրտը զբաղեցնող խնդիրները և ինչ-
պէս պարզ բնութեամբ փնտռում էր նա ամէն
տեղ քրիստոնէութեան երակրը և ցոյց տա-
լիս ուր թոյլ էր կամ ուր բոլորովին չի խփում
առաջարկելով միջոց, դեղ՝ զարկը զօրեղա-
ցնելու: Բայց աւելորդ չի լինի մի վերջին
օրինակ էլ բերել նորա քարոզչելից, որ ե-
րեայ Պարկերի հմտութիւնը հասարակական
և անհատական կեանքի մէջ: Այս կողմից աշ-
քի է ընկնում նորա քարոզը՝ «բնդդէմ արդի
փարիսեցիներին» որ հոգեբանականն ուր վեր-
լուծութիւնը և բնաւորութեանց ճշգրիտ գը-
ծագրութիւնն իրար վերադանցում են: Սկզբ-
բում նա բնորոշում է Երեսուրի ժամանակուայ
փարիսեցիներին և ապա անցնում ժամանա-
կակիցներին: Մարդկային այդ դասը այժմ
էլ մեռած չէ: Նրանք էլի բաղձնաթիւ են և
զարձեալ վատ, այժմ ինչպէս և առաջ դե-
րադասում են մարդկային փառարանութիւնը
աստուածայինից: Հիմի էլ սիրելի է այդպի-
սիներին քիչ ծախսով բարի երեւել, քան խ-
կապէս բարի լինել: Առաջ գնում էին հակա-
ռակ Մեսայիսի խօսքով՝ յառաջադիմու-
թեան: Ո՞ր մարդուրէի վերայ քար չեն ձգել
Նոքա մահաբաժաններ են կանգնում այն վե-
րանորոգիչների համար, որոնց անշուշտ կա-
ռափնատեղի կրարձրացնէին: Հասարակու-
թեան բոլոր խաւերում փարիսեցիներ կան:
Թէ պահպանողականների թէ արմատական-
ների թէ հարուստների և թէ աղքատների
մէջ: Բնութեամբ իրար նման՝ սակայն նոցա կա-
րելի է բաժանել մի քանի դասերի: Եւստ օճա-
ղի մամուլի և եկեղեցու և ին փարիսեցիներ:
Առաջինը այն տեսակի մարդ է, որ ըստ ե-
րեւութին հոգում է իւր ընտանեաց՝ կնոջ
որդուց բարօրութեան համար, սակայն խկա-

պէս իրանից այն կողմը չի մտածու մի ծառանե-
րին նա անդադար աշխատեցնում է շարաշար
պատճառ բերելով անգործութեան վատ հետե-
ւանքը՝ այն է ծուլութիւնը: շատ վատ կերա-
կրում է, պատճառելով թէ չպէտք է վարժեցնել
շուշլութեան: Կնոջ ու որդուց շարունակ
յիշեցնում է իւր զոհողութիւնները: Այս
կարդի փարիսեցիները շատ քիչ են, որով-
հետեւ շատ շուտով պատռուում է նոցա
գիմակը: Աւելի բաղձնաթիւ են մամուլի
փարիսեցիները, սոքա լքուած ու կոկուած
պարսններ են, ամէնից աւելի աշխատում
են շոյել իրենց ընթերցողների ակամջնե-
րը: Բիթը քամուն բռնած գնում են հա-
սարակաց կարծիքի ետեւից: Երբեմն գուշա-
կութիւններ էլ են անում: Բայց այնպիսի անո-
րոշ բառերով, որ կարող են զարմացնել Բիւ-
թեան պատգամախօսին: Եթէ խմբագիր
փարիսեցին ցանկայ մինի անունը ձգել
կամ մի հիմնարկութիւն տապալել, «հա-
ղորդում են մեզ» կեղծիքով ինքնագիր
վատ յօդուած կհրատարակէ: Խմբագրա-
կան ծանօթութեամբ, որ ճշմարտութիւնը
պարզելու համար տեղ է տալիս ամէն տեսակ
յօդուածներին: Ամէնից փնտաւար են փարի-
սեցի քարոզիչները, որովհետեւ այնպիսի գիր-
քի մէջ են, որ ամենափոքր բիծն անգամ ա-
հային կեղա է երեւում: Նրանք մեղանշում են
կրկնակի՝ ձեռն գերադասելով բովանդակու-
թիւնից: Երկրորդ, դրքա աւելի տալին են հա-
ւատում՝ քան հոգուն: Եթէ մէկը յանգդնի
«Թաղաւորաց զբոց» մէջ հակասութիւն ցոյց
տալ խկոյն այդպիսուն անաստուած կհրա-
տարակեն:

Երբ մարդ մտքովն անց է կացնում Պար-
կերի հասարակական և զբաղմուն բազմակերպ
գործունէութիւնը, հոգու աշքի առաջ բար-
ձրանում և ձեակերպուում է ինքն իրան՝
այդ ճշմարտութեան և մարդասիրութեան ա-
ռաքելի հրապուրիչ պատկերը:

Դա մի վտեմ և կատարեալ հերոսի տիպ
էր, որի խօսքը երբեք չէր հակասել՝ գործին
և որը միշտ պատրաստ էր կեանքը զոհ
բե-
րել համոզման համար: Պարկերի առաջնոր-
դող տատը՝ ինչպէս յիշեցինք, միշտ եղել է
մարդու բարոյական անսահման կատարելու-

Թեան գաղափարը և դրան սերտ միացած մարդկային համաշխարհային եղբայրութեան իդէալը, որի իրագործուիլը չէր սպասում ոչ կրօնական արտաքին գաւանանքներից, ոչ քաղաքական հիմնարկութիւններից, այլ հոգութեան բարձրութիւնից, որ պիտի կատարուի քրիստոնէութեան ազդեցութեամբ, նա խորը համոզուած էր, որ երկրում ամէն բան աւելի լաւ կլինի երբ մենք ինքներս աւելի լաւ լինինք: Այդ համոզումը լուսաւորում էր նորա կենաց ճանապարհը: միութարում էր Պարկերին նոյն իսկ մահուան սառն բազուկների մէջ: Մահուան տագնապի մօտ նա իւր անձը երկսի բաժանուած էր տեսնում: Մինչդեռ մի Պարկերը մեռնում էր Փլորենցիայում, միւսը ապրում էր Ամերիկայում և շարունակում առաջնի գործը:

Պարկերի ցանած մարդասիրական և բարոյական սերմերը բազմաթիւ են. նորա գաղափարներից շատերը իրականութիւն են դրտել, շատերը մոռացուել իրր կենանքի պայմանաւոր ընթացիկ երեւոյթ, բայց կայ մի գաղափար, որի իրագործումը ապագայ սերնդի գործ է և նորա մարդասիրական սկզբունքների պսակը՝ մարդկային ազգի եղբայրութեան գաղափարը: Նա իւր կենդանութեան տարիներում քիչ չի աշխատել այդ գաղափարի յարթանակելու յաջողութեան համար: Ուրովհետեւ ամենից մեծ արդելք նպատակին հասնելու համար ազգայնութեան գաղափարն էր, ուստի Պարկերը գործ դրեց իւր հոգու բոլոր ուժերը այդ խնդրում: Թէ Պարկեր որքան համոզուած աշխատում էր այս գործի համար, երեւում է այն համեմատութիւնից, որ մէջ է բերում իւր թղթերից մէկի մէջ: «Անգղո — Գաղղիական պատերազմում Վերա — Կրօսի մօտով անցնում էր գիշերը ուշ անդլիական պատերազմական մի նաւ: Զաղաքին մօտենալիս նա նկատեց մի ահագին սև բան. թէ նաւապետը և թէ նաւաստիները կարծեցին, որ այդ թշնամու նաւն է: Անգլիացիք ձայն տուին. ոչ մի պատասխան չտացան. լուսութիւնն աւելացրեց նոցա կասկածը, և դառի երկիւղով բռնուած՝ նաւապետը հրամայեց ռմբակոծել թշնամուն: Ռմբակոծումը շարունակուեց ամբողջ գիշերը. սուլում

էին գնդակները և տրաքուում, բայց սև բաւը լուռ էր ըստ առաջնոյն: Լուսարացին միայն տեսան անդլիացիք, թէ որքան տկար ու ապարդիւն էր նոցա ջանքը, նոքա կռուում էին մի ահագին որձաքար ժայռի դէմ: Այսպէս է և բարոյականութեան սահմանում: կան ժայռի նման հաստատուն ճշմարտութիւններ, որոց առաջ ուշ թէ շուտ պիտի խորտակուին մարդու ևսական ձգտումները: Կծագի արեգական ճառագայթը և մարդիկ կտեսնեն, որ ունայն էր նոցա ճշմարտութիւնը՝ խաթարելու ջանքը, նա հաստատուն է առաջուայ նման և ոչ մի յարձակմունքից չի վախենում:—Սև թէղդորոս Պարկեր մի ողբերուած քարոզ է այդ ճշմարտութեան, կենաց ծովի ալիքներից ելած. նա մի կարապետ էր մարդկութեան բարեկամների այն տենչանօք փափագած օրուայ, երբ կանխայտանան ազգային նախապաշարմունքներն ու ցեղական հակակրօնութիւնները և երբ մարդիկ իրար եղբայր կհամարուին:»

Ս. Յ.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՅԻՆՆԵՐ.

ՕՐԹՈՂՈՔԱՅ ԵԿԵՂԵՅԻ:

Հանգուցեալ Թագաժառանգ Մեծ Իշխան Գէորգէ Ալէքսանդրովիչ մարմինը յուլիս 6-ին պալատից եկեղեցի տարուեցաւ և յաջորդ օրը բերուեցաւ Բորժոմ, որտեղից Բաթումի և Նովորոսիյիտի վերայով Պետերբուրգ պէտք է փոխադրուէր: Թագաժառանգի գաղաղին ուղեկցում էր Աբասթումանից Մեծ Իշխան Նիկոլայ Միխայիլովիչ, իսկ Բաթումում հանդիպեցին Պետերբուրգից եկած Մայր Կայրուհի Մարիա Ֆէոդորովնա, Օդոտափառ եղբայրը՝ այժմեան Թագաժառանգ Միխայիլ Ալէքսանդրովիչ, Օդոտափառ քոյրերը՝ Կսէնիա և Օլգա Ալէքսանդրովնա, Մեծ իշխաններ Ալէքսէյ Ալէքսանդրովիչ և Ալէքսանդր Միխայիլովիչ: Ողբացեալ Արքայազնին վերջին յարգը մատուցանելու համար ճանապարհին ամէն տեղ խուռն բազմութիւն զինուորում էր գաղաղը տանող մասնաւոր դը-

* Յան. Բաղում «Книжка Нед.» 1899 май, համարից: